Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենտրոնական գրավաճառանոցում»:
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամէնայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.
Օտարքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“, իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

1896-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆ
Այն անձինք և հաստատութիւնները, որոնք ԱՅԺՄԷՆ ԻՍԿ կըստորագրուին 1896 թուի „Արձագանք“-ին, կը ստանան համարները բաժանորդ գրուելու օրից՝ վճարելով ընդամէնը տասը ռուբլի:

ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԿՐԱԿԻ ԴԷՄ ԹԻՖԼԻԶՈՒՄ
ապահովագրում է Թիֆլիզի ամեն տեսակ շինութիւնները:
ՏԵԼԵՖՕՆ № 288.
Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրայ և բաց է առաւօտեայ 9 ժամից մինչև 2½ը:
Մուտքը՝ Վելեամինով. փողոց, քաղաքային դումայի պօղերդ:
(Ուրբ.) (21—19)

ОТКРЫТА ПОДПИСКА на 1896 г.
НА ГАЗЕТУ
„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“
ПРОГРАММА ГАЗЕТЫ: I. Правительственныя распоряженія. II. Телеграммы собственныхъ корреспондентовъ и „Россійскаго телеграфнаго агентства“. III. Статьи по внутреннимъ вопросамъ. IV. Обозрѣніе иностранной пелитической жизни. V. Мѣстная хроника: засѣданія думы, обществъ и желѣзно-дорожныя новости. VI. Корреспонденціи. VII. Общая хроника—внутренняя и иностранная. VIII. Фельетонъ литературный, научный, повѣсти, разсказы и др. IX. Судебная хроника. X. Смѣсь. XI. Театръ и музыка и XII. Справочный отдѣлъ.
Съ перваго января „Тифлисскій Листокъ“ будетъ выходить, безъ увеличенія подписной цѣны для городскихъ подписчиковъ, въ форматѣ большаго газетнаго листа и будетъ имѣтъ на каждой страницѣ шесть колоннъ (форматъ газеты „Кавказъ„)
Увеличеніе формата даетъ редакціи возможность знакомить читателей ежедневно съ текущими новостями дня и разнообразитъ содержаніе газеты.
ПОДПИСНАЯ ЦѢНА:

городская.		иногородная.	
На годъ.	5 р.	На годъ.	7 р.
„ 6 мѣсяцевъ . . .	3 р.	„ 6 мѣсяцевъ . . .	3 р. 50 к.
„ 3 „ . . .	1 р. 75 к.	„ 3 „ . . .	2 р. —
„ 1 „ . . . —	75 к.	„ 1 „ . . .	1 р. —

Подписка принимается исключительно въ конторѣ изданія: Тифлисъ, Головинскій проспектъ, домъ № 3, а въ г. Баку—въ табачномъ магазинѣ Энфіаджіанца. (3—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Արձագանք»ի հեռագիրներ: Կովկասցիք և մայրաքաղաքի ռուս մամուլը:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Սամսոն և կեղծաւոր հասարակութիւն: Հայկական եկեղեցի Աբասթումանում: Կարսի երկաթուղու շինութիւնը: Գիւղական դատակարգի վերաբերեալ օրէնսդրութեան վերաքննութիւն: Դպրոցների արձակուրդը: Ռուս-պարսկական բանկի բաժիններ: Երկաթուղու գնացքների արագութեան աւելացումն: Բժշկ. ֆակ. Օդեսայի համալսարանին կից: Մի նոր բժշկական շաբաթաթերթ: Պետերբուրգի փոստի չստացուիլը Տաշկենտից: Ինժեներների երկրորդ խնամխուս: Օպերային ներկայացումներ: Երկաթուղու սակագներ: Գօրիից: Բաթումում հրատ. լրագրի արտօնութիւնները: Նուէր յօգուտ «Եասլի» ընկերութեան: Քննութիւն մասնաւոր բանկերի հաշուապահական գրքերի:
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Լուրեր:
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Դէպքերը Թիւրքիայում:
ՖԵԼԻԵՏՕՆ.—Թիւրքիայի տնտեսական վիճակը: Հիւսիսային Կովկասի հայ գաղթականութիւններից մէկը:
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Առաքինութեան մրցանակ:
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՋԱՆԱՁԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՐՁԱԳԱՆՔ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«Ռուսսկ. գործակալութիւնից» ստացանք հետևեալ հեռագիրները.

ԲԵՐԼԻՆ (20 դեկտ.) «Kölnische Zeit.»-ին հեռագրում են Էրզրումից որ տեղական հայոց եպիսկոպոսը, որին տաճիկ իշխանութիւնը հայ շարժումների առաջնորդ է համարում, ձերբակալուած է և ուղարկուած Կ. Պոլիս: Ասում են որ եպիսկոպոսին պիտի բնակեցնեն Երուսաղէմում:

ԿՈՎԿԱՍՑԻՔ և ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԸ

(Իշխան Գ. Ա. Գուրամովի ճառը)

Վերջին ժամանակներս Պետերբուրգի և Մոսկուայի ռուս մամուլի մի քանի օրգանների մէջ յայտնի նպատակով երևցած յօդուածները գլխաւորապէս հայերի և մասամբ վրացիների դէմ բառ արժանոյն գնահատութիւն Կովկասեան մամուլի կողմից, որ հնար եղածին չափ ապացուցել, թէ որքան անհիմն են և չարամիտ հայերի դէմ եղած յարձակումները: Այդ յօդուածներն ինչպէս երևում է վիրաւորել են և վրաց ազնուականութեան պատուասիրութիւնը: Կիրակէ, դեկտեմբերի 17-ին, Թիֆլիզի նահանգի ազնուականաց արտակարգ ժողովում հերթական հարցերը վերջանալուց յետոյ ժողովի անդամ իշխան Գ. Ա. Գուրամովը դիմեց ազնուականաց առաջ իշխան Կ. Բագրատիոն-Մուխրանսկուն հետևեալ ճառով.

«Ձերդ պայծառափայլութիւն: Վերջին ժամանակներս ռուսաց մամուլի մի քանի օրգանների մէջ սկսել են երեւալ յօդուածներ, ուղղուած մեզ — վրացիներիս դէմ: Գուցէ և չարժէր այդ յօդուածների վրայ ուշադրութիւն դարձնել բոլորովին, եթէ նրանք տեղ չըգտնէին այնպիսի լրագրներում, որոնք շատ են տարածուած և իրանց հետ տանում ու ցանում են մեր ընդարձակ հայրենիքի բոլոր անկիւններում տեսլութիւն դէպի մեզ: Ի հարկէ ես հեռու եմ մամուլին նախատելու մտքից, եթէ նա մեզ կրիտիկաբար վերաբերուի. Տէրը մի արասցէ որ ես այդպիսի սրբապղծութիւն գործեմ: Ընդհակառակն որքան արագ մտրակեն մեր հասարակութեան վէրքերը, այնքան աւելի շնորհակալ պիտի լինին մամուլի գործիչներից: Բայց ուրիշ բան է ազնիւ, անկեղծ, ճշմարտութեան վրայ հիմնուած կրիտիկան և ուրիշ է մտացածին—սուտ հնարովի փաստերի կոյտը, նրանց չարամիտ լուսաբանութիւնը, որի հետևանքն է անարգ անուանարկութիւն: Այդ արդէն կրիտիկա չէ, այլ նախապէս խորհած չարամտութիւն:

«Դժբախտաբար ճիշտ այդ բնաւորութիւնն ունին այն կատաղի յարձակողական յօդուածները (ֆիլիպպիկա), որոնք առատօրէն գրվում են մեր դէմ: Նրանց բովանդակութիւնն ամենքին յայտնի է և ես աւելորդ եմ համարում այստեղ, ներկայ ժողովում, ապացուցանել նրանց փաստերի կատարեալ ստայօղութիւնը: Ուրիշ ժամանակ և ուրիշ հանգամանքներում մեզանից մէկն ու մէկը իւր վրայ կ'առնէ այդ պարտականութիւնը և ցոյց կըտայ ռուս հասարակութեան, թէ ինչ գին պէտք է տալ մի քանի անձանց խօսքերին, որոնց համար ոչինչ արժէ ժողովրդին մոլորեցնելը: Այժմ ես յարմար եմ համարում միայն հարևանցի շօշափել այն հետևանքները, որին յանգում են մեր մեղադրողները:

«Նրանք պնդում են, իբր թէ մենք վրացիներս այստեղ բռնում ենք բոլոր պաշտօնները պետական ծառայութեան մէջ, որ մենք ներկայանում ենք իբրև սեպարատիստական հակառակորդներ ռուս տարրի, թէ մենք կաշկանդում ենք երկրում ռուսական ձեռնարկչութիւնը: Մինչև անգամ մի վրացի պաշտօնեայի գործունէութիւնը—որի նպատակն է եղել պաշտպանել գանձարանի շահը և որ պաշտպանել է պետական հողերը մի Մոսկուացի հարստահարչի դէմ—այդ ևս բացատրվում է իբր գիտակցութիւն ռուսական շահերին: Այդ հիմունքների վրայ նրանց առանց քաշուելու առաջարկում են հալածել մեզ — իբրև անյուսալի տարրի—ոչ միայն ծառայութիւնից, այլ և այն երկրից, ուր Աստուծոյ կամքով մենք ապրում ենք մի քանի հազար տարիներից ի վեր:

«Ինչպէս տեսնում էք, այստեղ այնպիսի լարեր են ձեռք տալիս, որոնց վրայ խաղալով կարելի է մոլորեցնել հասարակական կարծիքը. և մեզանից ով կարող է լսել և հանգիստ հանդիսատես լինել, երբ այսպէս անարգվում է ճշմարտութիւնը և մեր ամենալաւ զգացումները: Ինչպէ՞ս. մենք, վրացիներս երևան ենք գալիս իբրև հակառակորդներ ռուսական տարրի: Այդ սուտ է և զրպարտութիւն: Վրաստանի ամբողջ պատմութիւնն ապացոյց է, որ նա միշտ ձգտել է դէպի իւր համատակից Ռուսաստանը. իսկ սկսած այն օրից, որ վրացիք կամաւ ռուս քաղաքացիներ են դարձել, այն օրուանից նրանց անձնուրաց հաւատարմութիւնը իրանց նոր հայրենիքին կարող է իբրև օրինակ ծառայել ամենքի համար: Այդ մասին չափազանց ճարտարախօս կերպով վկայում են բազմաթիւ պատերազմները և կռիւները, որոնք հաչակուած են վրացիների դիւցազնական քաջագործութիւններով, վրացիների, որոնք իրանց գլուխը զոհել են ռուս զինուորի գլխի հետ միասին, նրա հետ նոյն նպատակին դիմելով, այն է—հայրենիքի փառքը և հզօրութիւնը: Ահա մեր հայրերի կտակը, որ մենք յոյս ունինք աւանդել մեր որդիներին մաքուր և անբիծ դրութեամբ: Ուրեմն ո՞վ է համարձակվում մոլեռանդութիւն անել այնտեղ, ուր տեղիք չկայ մոլեռանդութեան, ո՞վքեր են այդ սուտ-Կատոնները, որոնք առաջարկում են կործանել Կարթագինէն այնտեղ, ուր Կարթագինէ չկայ, այլ կայ դարերով սրբագործուած եղբայրական միութիւն և փորձուած հաւատարմութիւն:

Ձերդ պայծառափայլութիւն. ես յոյս ունիմ արտայայտիչ լինել այստեղ ներկայ եղողների ամենքի ցանկութեան, եթէ դիմեմ ձեզ հետևեալ խնդրով.—պաշտպանեցէք մեզ անիրաւ հալածանքից, միջնորդեցէք ձեռք առէք, որպէսզի ռուս հասարակութիւնը մեր մասին իմանայ նաև ճշմարտութիւնը՝ որ ռուս մարդիկ ակնյայտնի տեսնեն, թէ որչափ իսկականը նման չէ այն հրէշաւոր կարիկատուրներին, որոնց մէջ մեզ են պատկերացնում երկու մայրաքաղաքների մի քանի օրգանների սիւնակներում: Ի դէպ. ես բոլորովին համաձայն եմ մեզ մեղադրողներից մի քանիսների այն մտքին, որ մեր երկրում սենատորական վերաքննութիւն նըշանակուի: Խնդրում եմ ձեզ, ձերդ պայծառափայլութիւն, աշխատեցէք, աջակցեցէք որ այդ ցանկութիւնը հնար եղածին չափ շուտով իրագործուի: Ես կանխաւ համարձակ յայտարարում եմ որ անաչառ սենատորական վերաքննութիւնը (сенаторскія ревизія) մահուան պատիժ կըկարդայ մատնութեան և սուտի դէմ. իսկ ճշմարտութիւնը կըհանէ իւր արժանաւոր բարձրութեան վրայ, որտեղից այնքան մեծ ջանքերով աշխատում են նրան տապալել ստախօս և չարամիտ մարդիկ:» (Երկար ծափահարութիւններ):

Դրան իբրև պատասխան ազնուականների առաջ իշխան Կ. Բագրատիոն-Մուխրանսկին դիմեց ժողովին հետևեալ խօսքերով.

«Պարոնայք, ես թոյլ չեմ տալ որ այդ առարկայի համար այստեղ որևէ վիճաբանութիւն լինի: Բայց ձեզ և ազնուականութեան հանգստացնելու համար պարտաւոր եմ բացատրել, որ այդ յարձակումները ոչ մի կերպով համապատասխան չեն կառավարութեան տրամադրութեան ու հայեացքներին: Ձեզ ամենքիդ յայտնի է որ Վրաստանը նոյն իսկ մինչև Ռուսաստանի հետ միանալ, նրա հետ ընդհանուր շահեր ունէր, որոնք գրգռեցին միանալը մեծ-ուղղափառ պետութեան հետ: Մեր հաւատարմութիւնը յայտնի է կառավարութեան: Իսկ ինչ վերաբերում է մեզ մեղադրողներին, գիտէք, պարոններ, թէ ինչն է նրանց գինում մեզ դէմ: Այն, որ մենք վրացիքս—պահպանողական ենք: Դադարեցնում եմ բոլոր վիճաբանութիւններն այդ առթիւ»:

Ի սրտէ ուրախ ենք որ վրաց ազնուականութիւնը և ինտելլիգենցիան արդար ցասումն են արտայայտում ստախօսների դէմ ասպետաբար պաշտպանելով մեր ազնիւ դրացիների պատիւը. բայց մեզ զարմացնում է այն հանգամանքը, որ իշխան Դ. Գուրամովը լինելով բաւական մօտ հայկական շրջաններին, աչքաթող է արել

ՖԵԼԻԵՏՕՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

(Շարունակութիւն) *)

Դատարանք.—Ոստիկանութիւն.—Բանտ:

Դատարանք

Նահանգաց կեդրոնին մէջ խառնմաց կրօնական (դէտի) դատարանէն զատ, որ ամեն գաւառաց և գաւառակաց մէջ ևս կայ և նախագահն քաղաքական դատարանի նախագահն (նայիպ) է, կան նաև քաղաքական, պատժական, առևտրական և վերաքննիչ դատարաններ: Քաղաքական օրէնքներն (մէճէլլէ) շէրիի օրէնքէն քաղուած է, իսկ պատժական և դատավարական օրէնքները զատ են: Ընդհանուր առմամբ օրէնքները լաւ են, բայց երբ կաշառք մէջ կըմտնէ, դատաւորք իրաւունքն ու արդարութիւնը մէկ կողմ թողլով կըսկսեն նոյն օրէնքներէն իրանց նպատակին յարմար յօդուածներ քաղել և ըստ այնմ վճռել:

Մէճէլլէի օրէնքները որոշուած չէր, դատաւորք խնդիրն շէրիի օրէնքի մը համեմատելով իրենց ուզածին պէս կըվճռէին: Այժմ թէև օրէնքներն բացայայտ են, բայց կըրնան դարձնել իրենց նպատակին յառաջ տանել:

Դատարանաց մէջ նախագահն և սովորաբար Թուրք անդամն՝ ըստ առածին՝ իրանց առիւծի բաժինն ունին: Մեծամասնութիւնը իրանց կողմն է և քրիստոնեայ անդամն կըհետևի անոնց: Զմոռանամք նաև Ա. քարտուղարն, որ կրնայ շատ գործ տեսնել:

Դատարանի մէջ եթէ գտնուին 1—2 ուղղամիտ և անկաշառ հայ կամ թուրք անդամներ, որոց գոյութիւնը հազուադէպ է, սակայն և սոքա ապօրինի վճռոց չի մասնակցելու կամ ո և իցէ պատճառաւ մեծամասնութեան հետ չի համաձայնին, կրնան իրանց դիտողութիւնքն տոմարին մէջ գրել, բայց դիտողութիւնքն դիտողութիւն կըմնայ և մեծամասնութիւնն կըշարունակէ իւր գործ:

Դատ ունեցողն սովորաբար նախապէս ուղղակի կամ միջնորդով նախագահն, անդամները, երբեմն և քարտուղարը կըտեսնեն, իւր տալիք գումարին մէջ: Սոքա երբ ոսկւով շահուած են, կըրնան նախնական քննութեան այնպիսի ուղղութիւն մը տալ և թղթերն այնպէս պատրաստել, որ իրենց պաշտպանեալն փրկուի:

Անգամ մի հայ և Թուրք մէկ երկու կամ աւելի երիտասարդաց մէջ կռիւ մը տեղի ունեցած և հայն որ թէև լաւ համբաւ մը չէր վայելէր, սակայն իբրև զանակոծեալ խնդրագիր տուած և ամբաստանեալ Թուրք ծառայ մի որ կերևի թէ ուրացած էր իւր յանցանքն, ի քննութիւն բանտարկուած: Սոյն վերջնոյն տիրոջ կողմանէ Թուրք մ'եկաւ և քանի մ'արծաթ մէճիտ, տուաւ նախագահ նայիպ էֆէնդիին: Ցեռոյ աէրն եկաւ և սպասաւորին արձակումը խնդրեց: Նախագահը յիշեալ պէյին կամ էֆէնդիին՝ երիտասարդ սպասաւորին հետ ունեցած յարաբերութեանց նկատմամբ մի քանի մտերմական ակնարկութիւններ ընելէ յետոյ նախնական հարցաքննութեան թղթերն բերել տուաւ և հրահանգ տուաւ քարտուղարին, որ Թուրք ծառային կողմանէ այս ինչ կերպով նորէն գրուի: Ըստ նոր թղթոյն իբրև թէ ծառայն ըսած էր թէ «այն գիս ծեծեց, ես ալ զայն ծեծեցի». հետևաբար հայն ևս իբրև ամբաստանեալ բանտարկեցաւ, մինչև որ քննութիւնն աւարտի և դատաստանն տեսնուի: Իսկ Թուրք ծառայն որ հաւանօրէն 18—20 տարեկան կար, արձակուեցաւ, դատաստանին ներկայ գտնուելու պայմանաւ: Զարմացաւ հայն, թէ ինչպէս կըլլայ որ ամբաստանեալն կ'արձակուի և ինքն՝ ամբաստանողն բանտ կըմնայ, բայց եղաւ: Կը կարծէր թէ Թուրքին երիտասարդութիւնն էր պատճառը, չգիտէր թէ արծաթն ալ իւր դերը կատարած է: Եթէ այս դէպք հին ատեններ լինէր, դատաւորն բերանացի կըհրամայէր 'և ծառան կ'արձակուէր: Այժմ ևս նոյնն ըրաւ, բայց օրէնքի մը համեմատելով:

Աստուած միայն գիտէ թէ դատաւորք, քննիչ դատաւորք, ընդհ. դատախազք և ոստիկանապետք ո՞րչափ սպանութիւնք, գողութիւնք, կաշառակերութիւն և այլ ոճիրներ ծածկած ու ոճրագործն արդարացուցած են: Շատ անգամ գիտեն թէ ո՞վ է ոճրագործն, բայց ոսկին իրենց գործը կըշարժէ, քննութիւնը և դատաստանն ըստ այնմ կըյառաջանան և յանցաւորն կ'ազատի: Երբ ոճրագործն ոսկի և զօրաւոր պաշտպան մ'ունի, կըրնայ վստահ ըլլալ թէ արդէն փրկուած է:

Զմոռանամ նաև պատժական դատերու վկաներն (մուխպիր), որք վերաքննիչ դատարանն կըկոչուին ի վկայութիւն: Սոքա երկրագործ թէ արհեստաւոր իրանց վաստակէն կըզրկուին, ով կըհատուցանէ ասոնց օրական վարձք և ճանապարհի ծախքն, թէ և ըստ օրինի իրաւունք ունին:

Ահա այսպէս, դատարանաց մէջ արդարութիւնն իւր բացակայութեամբ կըփայլի, ոսկին կըթագաւորէ և ոճրագործք անպատիժ կըմնան և կըքաջալերուին: Արդարութիւնն հազիւ երբեմն կ'երևի, այն ալ միայն հայ կամ Թուրք աղքատ և անտէր անձանց համար, որք իրանց յանցանքը կըքաւեն բանտերու մէջ:

Ոստիկան զինուորք (զապթիյէ) և ոստիկանք (բոլիս)

Սոքա որ հանրային ապահովութեան պահպանման և գործադիր իշխանութեան պաշտօնեաներն են, շատ անգամ պատահած է որ իրենց վարք չի համապատասխաներ իրենց պաշտօնին: Ոստիկան զինուորք սովորաբար կ'ընտրուին ժողովրդեան այն դասակարգէն, որ արհեստ կամ առևտուր չունին: Ասոնց ընտ-

*) Տես «Արձագանք» № 147.

այն հանգամանքը որ մայրաքաղաքի մի քանի լրագրների թոյնը գլխաւորապէս ուղղուած է հայերի դէմ, որոնց մասին լսելը իշխան Գուրամովի կողից տխուր մտածմունքների տեղիք է տալիս. . .

Իշխան Գուրամովին անշուշտ իբրև հրապարակախօս լաւ յայտնի է որ Կովկասում առանձին ազգերի անունով, այսինքն՝ վրաց-ազնուականութիւն, հայ-ազնուականութիւն, թուրք ազնուականութիւն չկայ, այլ կայ ազնուականութիւն Թիֆլիզի նահանգի (վրացի, ռուս, հայ, թուրք), ազնուականութիւն Քութայիսի նահանգի (վրացի, ռուս, հայ) և այլն և այլն։ Թիֆլիզի նահանգի ազնուականների ժողովը նոյնպէս միայն վրացիներից չէ բաղկացած, այլ կան նրա մէջ և բազմաթիւ հայեր, որոնց դէմ են ուղղուած և աւելի ծանր չափով ստախօսների զէնքերը, և իշխան Գուրամովը իւր գեղեցիկ բողոքի մէջ հարկ չէ համարել այդ հանգամանքն 'ի նկատ առնել. Նա պարտաւոր էր անել այդ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՏԱԽՕՍ ԵՒ ԿԵՂԾԱՒՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

—

Անհատական սուտը, անհատի կեղծաւորութիւնը դատապարտելի է, իսկ հասարակութեան սուտն ու կեղծիքը—ոչ։ Անհատից պէտք է հաշիւ պահանջել նրա ամեն մի ասածի և արածի համար, իսկ հասարակութիւնից—ոչ. անհատը պիտի գործնականապէս իրականացնէ թէորիաները, իսկ հասարակութիւնն իրաւունք ունի բարձր թէորիաների հետ հանդերձ ամենազզուելի կեանք ունենալ։—Ահա թէ ինչ սոսկալի համոզմունք է կազմուել մեր հասարակական շրջաններում, ահա թէ ինչ ուղղութիւն է ստացել մեր հասարակական կեանքի ընթացքը, որի թանձր խաւարի և աղջամղջոտ ճահճի մէջ չէ կարողանում թափանցել ճշմարտութեան լոյսը։

Անհատներից հրաշքներ պահանջել, որ նա զոհի հասարակութեան համար իւր բոլոր էութիւնը, իսկ հասարակութիւնից ոչինչ։ Անհատի վրայ յարձակուել, քննադատել նրա նոյն իսկ մասնաւոր կեանքը, իսկ հասարակութեան վրայ ոչ, այլ խունկ ծխել նրա առաջ, յենուել նրա կարծիքի վրայ, հարստահարել նրա թիւր և կեղծ կարծիքը։

Նոյն իսկ մամուլը որ ոչ եւրոպական է, ոչ ասիական, ոչ արտայայտիչ է եւրոպական հասարակական կարծիքի և ոչ առաջնորդ մտքերի, այդ անգոյն, անսկզբունք, շահախնդիր մամուլը՝ որ իրան սովոր է պարծել ասիական հասարակական կարծիքներին, դեռ երէկ հայ հեղինակների վրայ ցեխ էր շպրտում համեմատելով նրանց քարոզած իդէալները, նրանց մասնաւոր կեանքի հետ և յանդիմանելով հակասելու թէ հայ գրականութեան սիւները, որոնք իրանց բոլոր կեանքն ու էութիւնը ամփոփել են իրանց մահից յետոյ թողած մի քանի հատորների մէջ—անհրաժեշտ մարդիկ են եղել, չեն հաւատացել իրանց գրածին ergo—արհամարհանքի են արժանի։ Ահա այդ է մեր մամուլի այն օրգանների դատաստանը, որոնք սորուել են հասարակութեան, որոնք հեղինակների ողջ ժամանակ հարստահարում են նրանց միտքը և տաղանդը, մեռած օրը հարստահարում են նրա անունը, իսկ երբ յիշատակը մի քիչ մոռացւում է—ցեխ են ձգում նրա վրայ։ Բայց այդպիսի հասարակութիւնը և մամուլն այդքան անամօթ է ոչ միայն մեռած հեղինակների վերաբերմամբ, այլ և նրանց, որոնք թէև կենդանի են, բայց իրանց ձայնը լսեցնելու հնարաւորութիւն չունին։

Ահա մի հայ հեղինակ, որին հասարակութեան որոշ դասակարգը փառաբանում էր և նրա անունը հրապարակ էր ձգում իւր շահագիտական նպատակների համար. երդվում էր նրա անունով, «համակրող» էր, պաշտպան էր հայլն, հայլն. բայց այդ բոլորը ոչնչանում է այն վայրկենին, երբ այդ հեղինակը նեղութեան և վտանգի մէջ է և պէտք է նրան օգնութեան հասնել։

Բացատրութիւններ էլ հարկաւոր են արդեօք այդ զզուելի երևոյթի համար, պարզ չէ՞ արդեօք որ այդ պօռոտախօս հասարակութիւնը ստախօս է և կեղծաւոր և արժանի իւր այն մամուլին, որ սնվում է շողոքորթութեամբ և ուրիշներին էլ սովորեցնում է այդ աժան ու անարգ կերակրով. . . ։

Sapienti sat!

* * *

Թիֆլիզի նահանգական իշխանութիւնը հաղորդել է Նորին Բարձր Սրբազնութեան Թեմիս Առաջնորդին, որ Թագաւոր Կայսրը բարձրագոյն բարեհաճել է թոյլատրել Աբասթումանում հայկական եկեղեցի կառուցանել։

* * *

Ինչպէս յայտնի է մտադրութիւն կար Կարսի երկաթուղու շինութիւնը վերջացնել 1898 թուականին. բայց շինութիւնն այնքան արագ է առաջ գնում որ այժմ կարելի է հաստատապէս ասել, որ ճանապարհը պատրաստ կըլինի 1897 թուականին։

* * *

Ներքին գործոց նախարարի և Կովկասեան կառավարչապետի համաձայնութեամբ Թիֆլիզում կազմուել է մի առանձին յանձնաժողով, որ պիտի վերաքննէ Կովկասեան գիւղական դատական կարգին վերաբերեալ օրէնսդրութիւնը։ Յանձնաժողովի նախագահն է կառավարչապետի խորհրդի անդամ պ. Կ. Վ. Ենկիմովը, Թիֆլիզի փոխ-նահանգապետ կոմս Տիզենհաուզենը, գիւղական ատենի անդամ իշխան Արղութեան, կառավարչապետի առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր իշխան Գրուզինսկին և քարտուղարի օգնական պ. Սլավինսկին։ Միևնոյն ժամանակ իրաւունք է տրուած նախագահ պ. Ենկիմովին կարևոր դէպքերում և իբրև խորհրդակցիչ անդամ կառավարչապետի թոյլտուութեամբ այդ յանձնաժողովի նիստերին հրաւիրել Անդրկովկասեան միւս քաղաքներից եւս պաշտօնական անձինքներ։

* * *

Մեր հայոց միջնակարգ և ծխական դպրոցներում արձակուրդները նոր տարուայ և Ծննդեան տօների առթիւ սկսուելու են վաղը, դեկտեմբերի 23-ին, և տևելու են մինչև յունվարի 8-ը։

* * *

Առաջիկայ տարուանից Թավրիզում և Մէշէդում պիտի բացուին Թեհրանում գտնուած ռուս-պարսկական բանկի բաժիններ։

* * *

Նոր տարուց սկսած երկաթուղու գնացքների արագութիւնը պիտի աւելանայ։

* * *

Ժողովրդական լուսաւորութեան նախարարութիւնն առաջարկել է պետական խորհրդին, որ 400,000 ռուբլի յատկացնուի Օդեսայի համալսարանին կից բժշկական ֆակուլտէտի շինութեան համար։

* * *

Յունվարի 1-ից Պետերբուրգում պիտի հրատարակուի մի նոր բժշկական երկշաբաթաթերթ ազատ նախնական գրաքննութիւնից։ Նոր օրգանը պիտի նուիրուած լինի հասարակական բժշկութեան և առողջապահութեան և պիտի անուանուի «Общественно-санитарное Обозрѣніе»։

* * *

Երկու օր է ահա որ Պետերբուրգի փոստը Թիֆլիզում չէ ստացուել։

* * *

ՏԱՇԿԵՆԴԻՑ հաղորդում են, որ դեկտեմբերի 6-ին, երեկոյեան ժամը 5 և 45 րոպէին այնտեղ երկրաշարժի երկու սաստիկ ցնցումներ են զգացուել։ Տների առաստաղները և պատերը ճաքել են։

* * *

Ի նկատի ունենալով որ Ռուսաստանում հետզհետէ զարգանում է ճանապարհների հաղորդակցութեան դիւրացնելու գործը, բազմանում են երկաթուղու գծերը և միևնոյն ժամանակ ինժեներների մեծ պակասութիւն կայ, ուստի տեղական շրջաններում հարց է դրուած որ ճանապարհների հաղորդակցութեան ինժեներների երկրորդ ինստիտուտ բացուի Մոսկվայում։ Ինչպէս հաղորդում է «Գրաժդ.», ինստիտուտը պիտի բացուի առաջիկայ տարի. սկզբում պիտի բացուին առաջին երկու լսարանները։

* * *

Այսօր երեկոյեան, Թիֆլիզի արքունական թատրոնում կըկայանայ օպերային ներկայացումն ի նպաստ թատրոնի կառավարիչ պ. Արսկու, որ թատրոնական վարչութեան ամենաեռանդուն և համակրելի գործիչներից մէկն է։ Ներկայացման համար ընտրուած է «Դիմակահանդէս» (Балъ-Маскарадъ) օպերան, որ կը տրուի նշանաւոր տէնոր պ. Մայնոյի և օպերային խմբի միւս առաջնակարգ խմբերի մասնակցութեամբ։

* * *

Երկաթուղիների տարիֆների էժանացնելն ահագին օգուտ է բերել գանձարանին։ Ներկայ տարուայ առաջին կիսին ստացուած եկամուտը 1893 թուի առաջին կիսամեակում ստացուած եկամուտից աւելի է երկու միլիոն երկու հարիւր տասն և հինգ հազար ռուբլիով։

* * *

ԳՕՐԻՍԻՑ հաղորդում են, որ այնտեղի հայոց գերեզմանատան եկեղեցին կողոպտել են անյայտ չարագործները։ Գողերը մտել են եկեղեցի կոտրելով դուռը և տարել են այնտեղից երկու գորգ, արծաթեայ սկիհը, կարմիր մահուդի սրբիչները և գանձանակի տուփը, որի մէջ 60 ռուբլի է եղել։ Տեղական ոստիկանութիւնը փողոցներից մէկում գտել է գանձանակի կոտրած և դատարկուած տուփը միայն։ Գողերի հետքը հասնում է մինչև Ծղնէթ գիւղի ճանապարհի վրայ գտնուած Զ.—ի գինետունը։ Գինետան տէրը և նրա գործակատար ձերբակալուած են, բայց իրանց յանցաւոր չեն համարում։

* * *

Բաթումում հրատարակուող «Չերնոմորսկի Վեստնիկ» լրագրի ստութիւնները հետզհետէ բացվում են։ Այդ լրագիրը մի լուր էր տպագրել իբր թէ իրան հաղորդում են Պետերբուրգից «հաստատ աղբիւրներից», որ Կովկասեան երկաթուղու վերանորոգութեան գործը փութացնելու համար, նոր յանձնաժողով պիտի ուղարկուի. մինչդեռ այդ վերանորոգութիւնը կատարվում է պետական երկաթուղիների վարչութեան փոխ-նախագահի իսկ. պետ. խորհրդ. ինժեներ Գօրչակովի անմիջական հսկողութեան ներքոյ Այժմ նոյն պ. Գօրչակովը հեռագիր է ստացել նախարարութիւնից, որ յայտնում է, թէ «Չերնոմ. Վեստնիկի» հաղորդած լուրը մտացածին է։

* * *

«Եասլի» ընկերութեան վարչութիւնը յայտնում է իւր շնորհակալութիւնը հետևեալ անձանց, որոնք նուիրատուութիւններ են արել յօգուտ դեկտեմբերի 31-ին բացուելիք մանկական հիւանդանոցի. իշխանուհի Ն. Զ. Անդրոնիկովա—25 ռուբլի Ի. Օ.—1 ռ., Կ. Խ. Զուլց—3 ռ., իշխ. Զ. Գ. Էրիսթով—3 ռ., Մ. Ա. Զդանովիչ—1 ռ. և Միտիա ու Սոնիա—10 ռուբլի։

* * *

Միջազգային բանկի մէջ տեղի ունեցած վերջին չարագործութիւնը տեղի է տուել ելևմտից նախարարին հրամայել՝ քննութեան ենթարկուեն մասնաւոր բանկերի հաշուապահական գրքերը։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ԼՐԱԳՐՆԵՐԻՑ

—

Վերջին թղթաբերով ստացուած Կ. Պոլսի լրագրները շատ հետաքրքրական տեղեկութիւններ են բովանդակում, որոնց մի մասը քաղուածօրէն դնում ենք այստեղ.

—Կ. ՊՈԼՍՈՅ զանազան մէճքէսէներուն մէջ գտնուած սոֆթաներէն մաս մը գաւառները պիտի ղրկուին Ռամազանի առթիւ երեք ամիս քարոզելու համար մզկիթներու մէջ։ Վեհափառ Սուլթանը հրամայած է որ ամէն մէկուն ճամբու ծախքի համար դրամ տրուի»։

—ՏՐԱՊԻԶՈՆԻ գաւառական թերթին մէջ հրատարակուած պաշտօնական յայտարարութիւն մը կը ծանուցանէ որ բացարձակապէս արգիլուած է քաղաքին մէջ զէնք կրելը։ Դուրսը զէնք կրել սովորողները ալ պարտաւոր են զէնքի թէզքէրէ ունենալ. օրինազանցները խըստիւ պիտի պատժուին։

—ԵԼՄՏԱԿԱՆ նախարարութիւնը հրահանգներ ղրկած է Խարբերդ որպէսզի 100 նոր ոստիկան գտնելու և պահելու համար հարկ եղած դրամը հայթայթուի։ Այդ նոր ոստիկանները պիտի գործածուին զօրացնելու համար նահանգին մէջ հանրային ապահովութեան հսկողները։

—ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ համար կարգուած դատական քննիչները, կ'ըսեն թուրք թերթերը, սա օրէն Կ. Պոլսէն ճամբայ պիտի ելլեն՝ իրենց պաշտօնատեղիները երթալու համար։

—Նահանգներ ղրկուած յանձնաժողովին մէկ մասը Պայպուրդի մէջ իրեն պաշտօնը աւարտած ըլլալով Մուշ ժամաներ է։

Միւս մասն ալ Թորտումէն Տիարպէքիր ժամաներ է, ուր իր պաշտօնին կիրառմամբը կը զբաղի։

—Նկատելով որ կուսակալներու և կառավարիչներու ոմանց բնակարանները հեռագրական կայաններէն հեռու կը գտնուին, որով անմիջական բանակցութիւններ յապաղման կենթարկին, ուստի, կայս. Իրատէ մը համաձայն, կուսակալներու և կառավարիչներու բնակարաններուն մէջ հեռագրական մասնաճիւղեր պիտի գտնուին։

—ՈՂՈՂՈՒՄ. Վերջերս Ատանայի կողմերը (Զէյթունէն ոչ հեռու) եղած հեղեղային անձրևներէն Սիհան գետը չափազանց լեցուելով յորդեր է։ Իր ջուրերը սովորականէն չորս մետր աւելի բարձրացեր են։ Գետեզրը գտնուած բոլոր շէնքերը ջուրին ողողուեր են, և ամէն մէկ շէնքին մէջ 50 սանդիմետր ջուր կայ եղեր։ Ողողումը տարածուեր է ընդարձակ գետիններու վրայ, շինուելու վրայ եղող զօրանոցը, խճուղին, միջնաբերդին դուռը, կառավարական պաշտօնատունը, զանազան հանրային հաստատութիւններ, գործարաններ, պարտէզներ և գերեզմանները ջուրով ծածկուեր են։ Մինչև հիմա երեք տուն փլեր են, սակայն կը յուսացուի որ միւս շէնքերը պիտի կրնան դիմադրել։

Նոր հասած լուրերը կ'ըսեն թէ ջուրը դեռ չէ քաշուած։ Եղած վնասը շատ մեծ է»։

Յայտնի է որ քիւրդ աւազակապետ Մուսա-բէկը որ արգելուած էր Աքքա, վերջերս փախեր էր իւր արգելարանէն, որպէսզի գնայ Փոքր-Ասիա իւր ոճրագործութիւնները վերանորոգելու համար. բայց ահա այդ առթիւ կարդում ենք Պոլսոյ լրագրներում հետևեալը՝

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ. Թուրք թերթերուն մէջ հետևեալ Պաշտօնական Զեկուցումը կը կարդանք.

«Վեհ. Սուլթանին խնամելով որ քիւրտ Մուսա պէյ, որ Մէկքիէ ղրկուած էր հոն բնակելու համար, իր ընկերոջ՝ քիւրտ Մուսթաֆաի հետ, Մէկքէէն փախեր է, հրամայած է որ անպատճառ ձերբակալուին։ Կայս. պալատին առաջին քարտուղարն ալ այդ մասին հեռագիր ուղղած է ամէն կողմ։ Այս անգամ Պաղտատի կուսակալութիւնը, ի պատասխանի առաջին քարտուղարին հեռագրին, ծանուցած է թէ Պաղտատի ոստիկան-զինուորներու հրամանատար Խոճէմ փաշա, որ Քէրպէլայի կառավարչի փոխանորդութեան պաշտօնը կը վարէ, ձերբակալած է Մուսա պէյը իր ընկերոջ՝ Մուսթաֆաի հետ։ Կայս. Իրատէ մը հրամայած ըլլալով հարկ եղած վարձատրութիւնն ընել Խոճէմ-փաշայի, պէտք եղածն ի գործ պիտի դրուի։ Մուսա-պէյի ձերբակալութիւնը՝ Վեհ. Սուլթանի յաջողութիւններէն մին ըլլալով, Ն. Վեհափառութեան համար բարեմաղթութիւններ եղած են և երախտագիտութիւն յայտնուած է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԷՊՔԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

—

Վիեննայից գրում են „Temps“ լրագրին.—«Թէև Կ. Պօլսում լուրեր են պտտում, որ շուտով պաշտօնի կըհրաւիրուի նախկին մեծ եպարքոս Քեամիլ փաշան, այնու ամենայնիւ այժմ խօսք կայ, որ շուտով Կ. Պօլիս կըհրաւիրուի Եգիպտոսի տաճկական կոմիսար յայտնի Մուխտար-փաշան։ Վերջինիս շատ մեծ պաշտօն պիտի առաջարկուի—կամ մեծ վէզիրութիւն, եթէ միայն Քեամիլ-փաշան հրաժարուի այդ պաշտօնն ընդունելուց և կամ Հայաստանի կոմիսարի պաշտօնը, որ այժմ վարում է Շաքիր-փաշան»։

—

Կ. Պօլսից հեռագրում են „Times“-ին թէ գերմանական դեսպանը իւր կառավարութիւնից ստացած հրահանգների համաձայն Դրան ամենալուրջ պահանջներ առաջարկեց՝ Զէյթունում հայերին կոտորելու առաջն առնելու նպատակով։ Այդ պահանջներին ձայնակցեց և բրիտանական դեսպան սէր Ֆիլիպ Կերրին։

—

Վեց մեծ պետութիւնների դեսպանները—ինչպէս հաղորդում է «Francfurter Zeit.»-ը յայտարարեցին Դրանը, թէ իրանց կառավարութիւնները պիտի բողոքեն այն խիստ միջոցների դէմ, որ Դուռը մտադիր է ձեռք առնել Զէյթունցի ապստամբների վերաբերմամբ։

—

„Times“ լրագրի թղթակիցը հեռագրում է Կ. Պօլսից.—«Սիրիայում կռիւ եղաւ դրուզների և այն չերքէզների մէջ, որոնք գաղթած են Ռուսաստանից 1877 թուի պատերազմի ժամանակ։ Վերջիններին օգնում էին Արաբ-էլ-Փասալ ցեղին պատկանող արաբները։ Արաբները յարձակուեցին դրուզների վրայ, որոնք ուժեղ դիմադրութիւն ցոյց տուին. այնժամանակ արաբները սկսեցին փախչել ձիաներով և դրուզներն ընկան նրանց ետևից։ Երբ դրուզների գիւղերից բա-

---

թեան ժամանակ թէև նկատողութեան կ'առնուի անոնց պարկեշտութիւնը և այլն, սակայն կարելի չէ խստապահանջ լինել. զի ստացական կամ արհեստաւոր թուրքերէն ո՞վ կը յօժարի ոստիկան զինուոր գրուիլ, որք լաւ համբաւ չեն վայելեր. ամսաթոշակնին հազիւ թէ կը բաւէ իրանց անհրաժեշտ ծախուց։

Ոստիկան զինուորք սովորաբար ազէտ ու անկիրթ մարդիկ՝ ահն ու սարսափն են մանաւանդ գիւղացւոյն։ Հարկ ժողովելու կամ կառավարութեան հրաման մը հաղորդելու և կամ այլ պատճառաւ գիւղերը կ'երթան, յաճախ ձրի կը կերակրուին, կը հայհոյեն և երբեմն կը գանակոծեն։ Եթէ գիւղացիք անոր օրինաց հակառակ տուած հրամանները չի լսեն կամ իրան դէմ գիտողութիւններ ընեն, նա վերադառնալով ի կենդրոն, «Կառավարութեան դէմ գրին, հայլն», ըսելով կ'ամբաստանէ։ Գիւղացիք կը բռնուին, կըբանտարկուին և քանի մ' ամիս տալով՝ կ'արձակուին։

Տարիներ առաջ ոստիկան զինուոր մի կար հինուսցի, որոնց խօսքերուն մէկ կարևոր մասը հայհոյանք էին։ Սա կը պատմէր թէ ինչպէս թուրքի գիւղ մ' երթալով գիւղացիի մը «կառավարութիւնը քեզ կուզէ» ըսելով գիւղէն դուրս հանած է և բաւական տեղ տանելէ յետոյ, կարևոր պարգև մը ստանալով արձակած է. թէ՝ բանտարկեալի մը բերնէն յանցանքի խոստովանութիւն մը լսելու համար ինչպէս ամբաստանեալին մատներուն մէջ վէգ կըդնէ կըսեղմէ եղեր հայլըն, հայլըն։

Ոստիկան զինուորաց և անոնց պետերուն ձեռքն է նաև բանտերու հսկողութիւնը։ Ո՛րչափ ոճրագործներու փախուստը դիւրացուցած են գործին համեմատ գումար մ' ստանալով կամ անհոգութեամբ պահպանելու անկարող գտնուելով։ Չերքէզ կալանաւոր կամ բանտարկեալ մի երբ փախչի, սովորաբար ոստիկան զինուորին անկարողութեան կը վերագրուի որ թեթև պատժով մի կ'ազատուի։

Ասոնք քիչով ալ գոհ կըլլան։ Վարչական, դատական կամ այլ պաշտօններու մէջ եթէ երբեք չունենան և պարագայներէն, պարգև մ' ստանալով կը յօժարին խնդրուած կերպով գործել և թոյլատուութիւն ընել։

Ապաքէն արդի ոստիկան զինուորք աւելի պարտաճանաչ են քանց հիները, որք փոքրիկ բռնաւորներ էին, սակայն պէտք է որ նորերն՝ ժամանակիս պահանջման համեմատ աւելի պարկեշտ և բարեկիրթ լինին։

Գալով ոստիկանաց, սովորաբար կարդալ գրել և փոքր ի շատէ օրէնք գիտցող մարդոցմէ կընտրուին և լաւ թոշակ կըստանան. սակայն ասոնց մէջ ևս կըգտնուին անհաւատարիմ մարդիկ, սա տարբերութեամբ որ մինչդեռ ոստիկան զինուորք ազէտ լինելով կոշտութեամբ կըգործեն, ոստիկանք աւելի ճարտարութեամբ կըգործեն։

Բ ա ն տ ե ր ն

Գաւառներուն մէջ կը գտնուին այնպիսի բանտեր, որ տխուր պէս տեղեր են և որոց առողջապահական պայմանք արդէն թերի են։ Բանտարկելոց համախռնումէն ու անմաքրութենէն կըգոյանան զազիր միջատներ և զարշահոտութիւն մը որք անտանելի են։

Թէև Տանզիմաթ 1272-ին բարեկարգութեան հրովարտակով և 1293-ին «Քանունի Էսասի»-ին 26-րդ յօդուածով մարմնական պատիժ, տանջանք և նեղութիւն տալն արգիլուած է, սակայն ոստիկան զինուորք՝ հաւանօրէն իրանց մեծերուն հրամանաւ տանջանքներ կուտան երբեմն ամբաստանեալ բանտարկելոյ։

Բանտերն տանջանավայրեր չեն, բայց երբ սովորական անմաքրութեան և այլ թերութեանց վրայ աւելնայ նաև տանջանաց հաւանականութիւնն, սոսկալի կը դառնայ բանտի անունն։ Քաղաքական յանցանօք ամբաստանեալ հայ բանտարկեալի մը համար կըսէին թէ աղերսագիր տուած է որ ի պատիժ որոշեալ աքսորավայրը ղրկուի։ Եւ բաղդաւոր պիտի համարի եղեր զինքը, եթէ բանտէն ազատելով աքսոր ղրկուի։

Երբ բանտարկեալն դատարանի առաջ ելլէ խօսի իւր կրած տանջանքները և ամբաստանեալ ոստիկան զինուորն կամ պետն ուրանայ, ո՞վ պիտի հաւատայ։ Եթէ տանջանաց և նեղութեանց հետևանօք բանտարկեալն կենազուրկ լինի, դժուար չէ բժշկէն վկայագիր մ' առնել թէ այս ինչ սովորական տենդէն կամ ախտէն մեռած է։

(Շարունակելի)։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՄԻՆԸ

—

Քաղաքական և տնտեսական հանգամանքներից ստիպուած հայ ժողովուրդը հինգ վեց դար շարունակ հետզհետէ հեռանալով իւր հայրենիքից, Եւրոպայի և Ասիայի այլևայլ կողմերում գաղթականութիւններ է հիմնել։

Նեղուած հայերը չունելով հեռաւոր երկիրներ, հիմնում էին գաղութներ. սկզբներում նրանք ունենում էին յաջողութիւններ, տնտեսական կողմից գտնւում էին բարւոք և նախանձելի վիճակի մէջ, իրանց հասարակական կարգերին և կրօնական պահանջներին գոհացում տալու համար տիրող կառավարութիւններից արգելքների չէին հանդիպում, հայերի յառաջադիմելու բոլոր ձգտումները դանդաղ արտօնագրերով խրախուսւում էին։

Ժամանակի ընթացքում շրջապատող կրօնասէր պայմանները հետզհետէ անհետացրել են նշանաւոր գաղթականութիւնները Հնդկաստանում և Եւրոպայում, թողնելով նրանցից պատմչի համար միայն տխուր յիշատակ։ Այդ անհետանալու վտանգին ենթարկւում են հիւսիսային Կովկասի հայ գաղթականութիւնները, քաղաքակրթութեան զուգընթաց կեղծ ու բոյքայլ կողմերը և տնտեսական նեղ վիճակն սպառնում են դրանց։ Մամուլի պարտաւորութիւնն է կարողացածին չափ տալ տեղեկութիւններ այդ գաղութների դրութիւնից, իսկ ժողովրդի ղեկավարների և բարեմիտ դասակարգի պարտքն է աւելի դրական միջոցներով հոգ տանել դրանց վիճակին մինչև բարւոք ժամանակ։ Այս մեր յօդուածում մտադիր ենք տալ մի քանի տեղեկութիւններ Մոզդոկի մասին։

Մոզդոկը գտնւում է հիւսիսային Կովկասի Թերեքեան նահանգում. այս նահանգում սրանից երեք դար առաջ ամբողջապէս բնակուած էր լեռնականներով, որոնք բաժանուելիս են եղել զանազան մանր ցեղերի և խօսում էին բոլորովին տարբեր բարբառներով, այդ ցեղերի ներկայացուցիչներն էին՝ օսեր, չերքէզներ, կաբարդիններ, ղումուղներ, չէչէններ և այլն։ Ռուսների մուտքը լեռնականների երկրին սկսվում է տասնեօթերորդ դարում. սկզբում գալիս են կազակներ և հիմնում Թերեքի ճիւղերից մէկի ափի վրայ մի աւան Թերեքի անունով։ Այդ և յաջորդ, տասնութերորդ դարում, Սաա-

ռական հեռացել էին, յանկարծ խժաղաւոտից ատյս եկան չերքէզները ու յարձակուեցին գիւղերի վրայ. այդպիսով գիւղերը մնացին երկու կրակի մէջ, բայց կռւում էին քաջաբար։ Պատերազմը տևեց մինչև կէս գիշեր, վերջապէս եկաւ տաճիկ փաշան 1500 զինուորներով և միացաւ չերքէզների հետ գիւղերի դէմ։ Այրւած են 20 գիւղեր։ Պատերազմի դաշտում երկու կողմից 1000 հոգուց աւելի ընկաւ։

—

Վիեննայից հաղորդում են, թէ յայտնի հրապարակախօս, արեւելեան հարցին լաւ ծանօթ (?) Վիեննայի „Correspondance de l'Fste“ լրագրի խմբագիր Միխայիլ Նիկլիևիչն հրաւիրուած է Կ. Պոլիս սուլթանի անձնական նամակով իբրև մտերիմ խորհրդական միջազգային քաղաքականութեան վերաբերմամբ։ Պ. Նիկլիևիչն Վիեննայի արեւելեան լեզուաց ճեմարանի սանն է և ծնուած է Պոդոլսկի նահանգում (Ռուսաստան), որտեղ մինչև այժմ էլ մօտաւոր ազգականներ ունի։

—

„Standard„-ին հեռագրում են Կ. Պոլսից.—«Այստեղ հաւատացնում են որ Աւստրո-Հունգարիան 'ի նկատի ունենալով տաճկական ֆինանսների այժմեան փտանդաւոր վիճակը, առաջարկութիւն է արել կամ մտադիր է անելու՝ որ Տաճկաստանի վրայ միջազգային ֆինանսական կօնտրօլ նշանակուի»։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Ինչո՞ւ պէտք է ձեռքի, մտքի ծնունդը վարձատրուի, ընդհանուր ուշադրութեան արժանանայ, մրցանակ ստանայ, իսկ սրտի արդիւնքը խաւարի մէջ, անուշադրութեան մատնուած մնայ։ Հասարակութիւնը ծափահարում, վարձատրում, խրախուսում է դերասանին, նկարչին, բանաստեղծին, հեղինակին, բայց ուշ չի դարձնում այն խեղճ մարդու վրայ, որ խեղճ լինելով հանդերձ ոչինչ չէ խնայում ընկերին օգնելու, փրկելու համար, որ վերջին պատառը կիսում է քաղցածի հետ, որ ջրի ու կրակի մէջ է նետվում, երբ տեսնում է, որ ընկերը վտանգի մէջ է։ Այս հանգամանքն էր ահա, որ դրդեց նշանաւոր բարեգործ բարոն դը Մօնթիօնին՝ ահագին գումար կտակել, որպէսզի նրա տոկոսիքը առաքինի մարդկանց համար մրցանակ լինի։ Այդ գումարը ֆրանսիական ակադեմիայի տնօրինութեանն է յանձնուած։ Ակադեմիան ինքը տեղեկութիւններ է հաւաքում և տեսնում, թէ ով ինչպիսի առաքինութիւն է գործել. ապա բոլորի կատարած գործերը քննադատվում, համեմատվում են և մրցանակ են ստանում, հրապարակական շնորհակալութեան են արժանանում նրանք, որոնք ամենաբարձր առաքինութեան գործեր են կատարել։ Մրցանակաբաշխութեան իրաւունք ունի աղքատ դասակարգը՝ թէ այր և թէ կին, թէ աղայ և թէ աղջիկ, թէ ծեր և թէ երեխայ։ Գործի բարոյական ազդեցութիւնն ահագին է. ակադեմիան հրապարակ է հանում խուլ անկիւններում կատարուած և թաքնուած ազնիւ գործը, գովում, փառաբանում և մրցանակ է տալիս խրախուսելու համար։ Այդ հանգամանքը վատերին և թոյլերին առաքինանալու և ազնիւ ու առաքինի մարդկանց աւելին գործելու է դրդում։

Այս տարի ամենամեծ մրցանակը՝ երկու հազար ֆրանկ, ստացաւ Հաւրի նաւազ Լևոն Լուի Պերիէ. դա ծովի վրայ շատ մարդկանց է ազատել։ Արդէն ասած է դարձել շրջակայքում, թէ մարդ իրաւունք չունի ծովում խեղդուելու, եթէ այնտեղ է Պերիէն։ Մի անգամ մենակ՝ առանց ուրիշի օգնութեան իւր մակոյկի մէջ առաւ 16 մարդ, որոնք զինուորական լաստանաւից ծովի մէջն էին ընկղմուել և խեղդուելու վրայ էին։ Մի անգամ էլ հինգ անգլիացի նաւազ փրկեց իւր մակոյկով։ Իւր կեանքի մէջ 28 անգամ ազատարարի պաշտօն է կատարել ինքնաբերաբար։ Անցեալ 1894 թ. ձմեռը՝ չնայելով սաստիկ ցրտին և իւր 64 ամեայ հասակին հագուստով ծովը նետուեցաւ և ջրերի խորքից մի խեղդուող երիտասարդ ազատեց։ Իւր անձնազոհ գործողութեանց համար այնքան պատուանշաններ և շքանշաններ է ստացել, որ իւր լայն կրծքի վրայ էլ տեղ չի մնացել ամենը կախելու։

Կանայք առաքինութեան գործում տղամարդկանցից յետ չեն մնում. անձնուիրութեան և անշահախնդրութեան այնպիսի հրաշալիքներ են ցոյց տալիս, որոնք յատուկ են միայն գեղեցիկ սեռին։ Օրիորդ Օգիւստին Ասորիք մանկաբարձ է մի փոքրիկ աւանում. 26 տարի է, որ նա գործում է և կարող է գիւղի բարեբարն ասուիլ։ Երկիրը, ուր նա գործում է, լեռնոտ է. այդտեղ նրա պաշտօնը ոչ միայն ծանր, դժնդակ, այլ և վտանգաւոր է։ Գիշեր ու ցերեկ նա պէտք է անցնի լեռնային շաւիղներով ու արահետներով։ Ով դիմի նրան, երբ էլ դիմեն նրան՝ երբէք «չէ» չեն լսել։ Օրիորդը ամեն ընտանիքի համար մի բարեբար հրեշտակ է։ Մեծ նուիրութեամբ ծննդկանների մօտ է գնում. տեսնում է, որ ընտանիքը խեղճ է, ոչ միայն իրան չի կարող վարձատրել, այլև անհրաժեշտ պէտքերի կարիք կայ, օրիորդ Օգիւստինը ոչ միայն ձրիաբար է աշխատում, այլև փող, գինի, արգանակ... հասցնում, այդ էլ այն կերպով, որ հարեւանները չիմանան։ Հարիւրաւոր մանուկներ և դեռատի կանայք իրանց կեանքը նրան են պարտական։

Տիկին Բալլօն աղքատութեան մէջ պահպանել է իւր 13 զաւակները. ամենքին ինքն է կաթ տուել, մեծացրել, դաստիարակել. բացի դրանից՝ նա 45 երեխայ էր որդեգրել, ամենքին էլ իւր կաթով մեծացրել, պահպանել։ Նրա 13 զաւակներն էլ քաջողջ են։

1834 թ. ձմեռը Քառէլ անունով մի մարդ մեռաւ, որ Մոնպալիէի ագարակապանն էր։ Մնաց այրին, եօթը որդի և ուրիշ ոչինչ։ Վեցերորդ որդին աղջիկ էր, Ժաննի անունով, դեռ երեք տարեկան։ Ապրուստ չունէին. առաջին հինգ տարին ծառայութեան մասին, մեծ մասամբ անթոշակ, հացափոր վարձով։ Այրին ստիպուած էր արտերի մէջ աշխատել և օրէնը մի քանի կոպէկ ձեռք բերել՝ հացի փող։ Իւր մօտն էր պահում և ամենափոքր երեխաներին։ Երբ Ժաննը քիչ մեծացաւ. իւր փոքրիկ ձեռներով աշխատելու կարող դարձաւ, ինքն էլ ծառայութեան տրուեցաւ։ Շուտով նրան թոշակ նշանակեցին. տարէնը երեք ֆրանկ էր աշխատում, հագուստն ու հացն ստանում։ Քիչ քիչ թոշակն աւելացրին. Ժանը կարողանում էր խնայողութիւն անել. խնայողութեամբ յետ դրած դրամը մօրն էր ուղարկում։ Ամեն բանից զրկում էր իրան. Տասնևհինգ տարեկան էր, որ առաջին անգամ իրան համար կօշիկ գնեց. բայց ինչպէս էր պահում, պահպանում այդ կօշիկը. միշտ այն էր մտածում, որ կօշիկը չըհինանայ, չմաշուի. եթէ կէս ժամ հեռի գտնուող եկեղեցին գնար, կօշիկը կըհանէր, թևի տակը կըդնէր և եկեղեցու դռանը միայն կըհագնէր։

Երեսուն երեք տարեկան էր, երբ սպասաւորութեան մտաւ Օրլեակի հիւանդանոցը։ Այժմ էլ այնտեղ է։ Թոշակը չնչին է, բայց տարեկան երեք ֆրանկի համեմատութեամբ, որ առաջ էր ստանում, կարող էր հարստութիւն համարուել։ Այստեղ էլ իւր թոշակը բաժանում էր մօր հետ։ Անձնական նոր փորձառութեամբ հասկացել էր, թէ որքան գեղեցիկ է անկողնի մէջ պառկել։ Եւ ցանկացաւ, որ մայրն էլ վայելի կեանքի այդ փափկութիւնը։ Իւր բաժնից փող յետ գցեց, բաւական քանակութեամբ բուրդ գնեց, ուղարկեց մօրը և հասկացրեց, թէ ինչպէս պէտք է անկողին շինել։ Բայց մայրն այդպէս չարաւ. նա չուզեց պառկել այն բուրդի վրայ, որից կարելի էր տաք հագուստներ պատրաստել։ Խնայողութիւն, շռայլութիւն համարեց բրդից անկողին շինել։ «Աղջիկս չափը անց է կացնում, մտածում էր նա. այս ինչ հպարտութիւն է»։ Եւ աղջկանը խրատելու դաս տալու համար՝ բուրդը մանեց, հիւսեց, և իւր զաւակների համար հագուստներ կարեց։ Բայց Ժաննն էլ իւր միտքը չփոխեց. նա ուզում էր, որ մայրն անպատճառ անկողնի մէջ պառկի։ Զիհամեցաւ. նորից բուրդ գնեց, անկողին պատրաստել տուաւ և այդպէս ուղարկեց, որպէս զի մայրն այլ ևս չկարողանայ մանել, հիւսել և բաճկոն ու անդրավարտիկ կարել։

Նոյն հոգածութեամբ նա սիրեց ընտանիքի բոլոր միւս անդամներին, մինչև երրորդ սերունդ։ Եւ քրոջ ու եղբօր որդիները սիրով են յիշում «մօրաքոյր Ժաննի» անունը և նրա անձնուիրութիւնը։ Իսկ ինքը նոյն համեստ աղջիկն է, և զարմանում է, երբ ասում են, թէ մեծ բան է արածը։

Պահակ Ֆինմոնը վեց տարի ծառայեց մի երեցփոխանի, որ պարլամէնտական գործունէութեան միջոցին խելքը կորցրել էր. երբ երեցփոխանին յիմարանոց տարան, Ֆինմոնն էլ գնաց և նրան ծառայեց յիմարանոցում։ Երբ երեցփոխանը քիչ լաւացաւ, տուն ուղարկեցին. այդտեղ էին նրա կինը և ծերունի աները. Ֆինմոնը նրա հետ այժմ էլ տուն վերադարձաւ։ Երեցփոխանի ընտանիքը հետզհետէ աղքատացաւ. էլ չէր կարողանում պահապանին թոշակ տալ։ Ուստի նրա համար ուրիշ ընտանիքում պահակի պաշտօն ճարեցին ու այնտեղ ճամբեցին հաւատարիմ ծառային։ Բայց այս հանգամանքը չկարողացաւ բաժանել Ֆինմոնին բոլորովին կտրել նրա հիւանդից, որի դրութիւնը հետզհետէ աւելի դժնդակ կերպարանք էր առնում։ Ամեն օր՝ երբ իւր գործն աւարտում էր, մէկ ու կէս ժամուայ ճանապարհ էր կըտրում, գալիս հիւանդին հարազատ որդու պէս խնամում, անտառի մէջ պտըտեցնում, յետոյ նորից նոյն ճանապարհն անցնում և իւր գործին գնում։ Նոր տէրերը Ֆինմոնի այդ անձնուիրութիւնը տեսնելով այնքան զգացուեցան, որ նրան հիւանդ երեցփոխանից մօտ տեղ տուին։ Ֆինմոնի աշխատութիւններն ու հոգացողութիւնը ի դերև ելան, երեցփոխանը նորից հիւանդանոց ճամբուեցաւ։ Նրա կինը սրտի ցաւից մեռաւ։ Մնաց աները՝ զառամեալ, կուրացած, հացի կարօտ։ Ֆինմոնն ու իւր երիտասարդ կինն այժմ այդ ծերունին են վերցրել խնամելու։ Ուրիշները փոքրիկ երեխաներ են որդեգրում։ Ֆինմոնը որդեգրել է մի զառամեալ ծերունի և իւր զօրաւոր խնամքով ամոքում է նրա վիշտն ու ցաւը։

Սօֆի Ռընօն ուզում էր կուսանոց մտնել, ողորմածութեան քոյր լինել։ Հաւատ ունէր. իւր մէջ կոչումն էր զգում, բայց պէտք եղած առողջութիւնը չունէր։ Երեք ամսից յետոյ յայտարարեցին նրան, որ դուր տեղը կրօնաւորութեան ունակ չունէ, որովհետև այնքան քաջողջ չէ, որ կարողանայ այն խստամբեր կեանքի զրկանքներին դիմանալ։ Եւ Սօֆին իւր հայրենիքը՝ ծնողների մօտ վերադարձաւ։ Այդտեղ մէկը չկար, որ նաւազ չլինէր։ Ցանկարծ մէկ կամ մի քանի ընտանիք զրկվում էին իրանց աշխատող ձեռքից, իրանց գլխից, որ նաւաբեկութեան զոհ էր լինում։ Եւ ահա Սօֆի Ռընօն սկսեց նրանց որբերին իւր մօտ ընդունել, պատսպարել և խնամել։ Եթէ բոլորովին փոքր են՝ իւր հաշուով ստնտուի է տալիս. երբ կաթից կտրւում են, վերցնում է իւր մօտ և ինքը պահում։ Յաճախ է պատահում, որ երեխային պատսպարում, պահպանում է, մօրն էլ նպաստ է տալիս։

Այնքան հարստութիւն չունի, որ բոլոր ծախքերը իւր քսակից տայ։ Դիմում է զանազան մարդկանց և նրանցից օգնութիւն է խնդրում։ Պատահում է, որ օրիորդի վրայ նեղանում են, ոչինչ չեն տալիս։ Այդպիսի դէպքերում օրիորդն ասում է. «գնում եմ, բայց և վստահ եմ, որ միւս անգամ ինձ չէք մերժի։ Միայն Աստծու աղքատների համար եմ գալիս ձեզ մօտ»։ Այսպէս ահա 14 տարի է, որ ապրում է իւր հայրենիքի որբերին ծառայելով։

Այդ և էլի ուրիշ առաքինութեանց համար Ակադեմիան մրցանակներ տուաւ և ընդհանուր շնորհակալութիւն յայտնեց։ Ամենամեծ մրցանակը 2000 ֆրանկ է, փոքրը՝ 500 ֆր.

Առաքինական այդ գործերը թուելուց յետոյ՝ Ակադեմիայի այդ նշանաւոր նիստի (նոյեմբ. 20) նախագահը գովեց Աւետարանի սկզբունքները, որոնց վրայ հիմնած է քաղաքակիրթ աշխարհի բարոյականը։ Ապահով է այդ բարոյականը, քանի որ անձնազոհութեան ձգտումը կայ, քանի գոյութիւն ունի այն գիտակցութիւնը, թէ երկրի վրայ դիզուած գանձը ժանգի, ուտիճի, գողերի ձեռքն ընկնելու վտանգի մէջն է, թէ երկնային գանձ պէտք է մթերել և առաքինի լինել։

«Այս բարոյական վարդապետութեան դէմ առարկութիւններ են լինում։ Աշխարհային բաներից հրաժարուել, քարոզելով և աղքատութիւնը դրուատելով՝ միթէ վտանգ չկայ անձնական շահի զգացումը ոչնչացնելու և այն եռանդը մարելու, որով մարդկութիւնը նիւթական աշխարհը ճանաչելու և շահագործելու է հետամուտ։ Միթէ վտանգ չկայ հասարակութեանց երկրային բախտին դէմ, որ է աշխատել, հարստանալ և զարգանալ... բայց այդպէս մտածողները թող ապահով լինին. անձնական շահի զգացումը երբէք չի անհետանայ։ Մարդու բնական հակումը անձնազոհութիւն չէ. և հարստութեան դէմ արհամարհանքն այնքան չի կարող տարածուել, որ հանրային վտանգ դառնայ»։

Թէ որքան ճիշտ է այդ նկատողութիւնը, երևում է այն հանգամանքից, որ ընկերի երջանկութեան համար աշխատելը, ինքնազոհութեան գաղափարը տեսնվում է աղքատ դասակարգի միքանի անհատների մէջ. իսկ այն մարդիկը, որոնց ձեռքին է ժողովուրդների բախտի ղեկը, առաջնորդվում են սառը հաշիւներով, նոյն իսկ յաճախ ծաղրում են թշուառութեան բարձրացրած աղիողորմ լացն ու հառաչը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Դեկտեմբերի 20-ից.

ԼՕՆԴՕՆ.—Հարաւային Ամերիկայի հասարակապետութեանց մեծ մասը Վենեցուէլլային դրամական և զինուորական օգնութիւն են խոստացել։ Բրազիլան իւր զօրաբանակն պատրաստում է Վենեցուէլա ուղարկելու համար։ Անգլիական յարձակման դէմ պատրաստ լինելու նախազգուշութեամբ՝ Բրազիլան սպառազինում է իւր նաւատորմիղը։ Վենեցուէլան որոշել է Անգլիային ամենափոքր զիջում անգամ չանել։ Ներկայ րոպէում պատերազմն անխուսափելի է թւում։ Անգլիայի քաղաքագէտները կարծում են, թէ յուզումը Միացեալ Նահանգներում մարել է, և Ամերիկայի կառավարութիւնը չէզոք դիրք կըբռնէ՝ թէ, պայմանական, այնպէս որ Անգլիան չի կարողանալ իւր յաղթութեանց պտուղները վայելել։ Անգլիական կառավարութիւնն սկսում է Քանադայի հարաւային ափերի ամրոցներն սպառազինել։ Զօրքերը կըմեծացնուի։ Բրիտանիայի հիւսիս-ամերիկեան նաւատորմիղը կըզօրեղացնուի։

ՊՐԵՏՕՐԻԱ.—800 զինուած անգլիացիք վեց թնդանօթներով խուժեցին Տրանսվալի հասարակապետութիւնը. նախագահը հրամայեց զէնքի ոյժով դուրս քշել նրանց։ Հասարակապետութեան բոլոր անդամները հրաւիրվում են նրա ազատութիւնը պաշտպանելու։

ՋԱՆԱԶԱՆ

Սեօր Ֆիլիպ Կէրրի և «Նոր-Դար».—Մեր քաղաքական և ազգային թերթերից մէկի դեկտեմբերի 21-ի համարում կարդում ենք.

«Գերմանական դեսպանի առաջադրութիւնները պաշտպանութիւն են գտած նաև Միացեալ-Նահանգների դեսպան սեօր Փ. Կերրիի կողմից»։

Կարող ենք հաւատացնել պ. Սպանդարեանին ու նրա աշխատակիցներին, որ սեօր Ֆիլիպ Կերրին (Ser Philip Currie) է և մնում է Մեծ-Բրիտանիայի դեսպան։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներվային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՔՈՒԴԵՆԿՕ—11—12 ժ. կանանց և երեխայոց համար։

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և ներվային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Դ. ԴՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մորթի հ.

Ա. Դ. ԴՈՒՐԿՕ քիմի-խաշուրացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան
ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.
ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ
Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի ցերեկից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթօդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

2—3 ժ. ցերեկը { կինամարդիկ և երեխաներ
6-ից երեկոյեան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասսաժ անող կին և մասաժիստ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

բախանի և Դօնի կազակներից գաղթում են վեց հարիւր ընտանիք և Թերէքի ձախակողմեան ափի վրայ հաստատում են գիւղեր և անուանում իրանց առաջնորդների (ատամանների) անուններով, ապաստան են գտնում այս կողմերում զանազան փախստականներ, տէրութիւնից աքսորած աղանդաւորներ։ Ռուսաց գաղթականութիւնները զէնքի ոյժով զօրեղ պաշտպանութիւն են գտնում Բեկովիչ իշխաններից, որոնք վաղուց արդէն քրիստոնէութիւն էին ընդունել և ընդարձակ կալուածքներ ունէին Թերէքին աջ կողմում։

Մոզդոկը Թերէքի ձախակողմեան ափի վրայ է հիմնուած։ 1762 թուին Կաբարդին իշխաններից մինը, Նուրհոկ-Կանչոկ, որ Պետերբուրգում քրիստոնէութիւն ընդունելով, ստանում է փոխգնդապետի աստիճան, առաջարկում է տէրութեանը թոյլ տալ իրան հիմնել Թերէքի ձախ ափի վրայ մի աւան, ուր պէտք է բնակուէր ինքը իւր երեսուն տուն ստորադրեալներով, աւանին տրվում է «Մոզդոկ» անունը, որ նշանակում է կաբարդիներէն խուլ անտառ։ Այդտեղ այժմ գտնվում է Մոզդոկը, որի շրջակաները այն ժամանակները ծածկւած են եղել կուսական, անթափանցելի անտառներով, վիթխարի ու դարաւոր ծառերը, որոնք այժմ էլ հատ հատ սիգաճեմ բարձրանում են իբրև կըպկած և խառնիխուռն բուսած մացառուտի միջից կենդանի վկաներ են այս հսկայատիպ անտառների գոյութեան։

Հիմնարկութիւնից յետոյ Մոզդոկում հետզհետէ շինվում են պահականոց, եկեղեցի, դպրոց և մաքսատուն. Մոզդոկը իբրև բերդաքաղաք ամրացնվում է և Կովկասեան պաշտպանողական գծի մէջ է մտնում։ Ճիշտ որոշել չէ կարելի, թէ որ թուականին են հայերն այս կողմերում բնակութիւն հաստատել. պ. Պոտտօն իւր «Կովկասեան պատերազմներ» վերնագրով գրքում, որտեղ նա ի միջի այլոց համակրելի ոճով է խօսում հայերի մասին, ասում է՝ որ հայերի մուտքը Կովկասեան լեռների այս կողմը տակաւին Պետրոս Մեծից է սկսուել։ Մեծն Պետրոս թագաւորը իւր՝ պարսիկների դէմ մղած պատերազմների ժամանակ առիթ ունեցաւ ծանօթանալու հայերի հետ. հեռատես կայսրը հասկանում էր թէ ինչ օգուտներ կարող է ունենալ հայերից, եթէ դիւրութիւն տայ նրանց գաղթելու նոր նուաճուող և վայրենի ցեղերով բնակուած երկիրները։ Հայերի արդիւնաբերական և առևտրական հմտութիւնը մի կողմից, տոկուն և ճըկուն բնաւորութիւնը միւս կողմից կատարեալ վստահութիւն և հաւատք էին տալիս կայսեր տածած յոյսերի իրագործմանը։ Հանճարեղ թագաւորի նախաձեռնութեան հայ գաղթականներին հովանաւորելու գործում հետևում էր և նշանաւոր կայսրուհի Կատարինէն, որի թագաւորութեան ժամանակ Ղարաբաղի մելիքներից շատերն իրանց ստորադրեալներով ընդունելով ռուսաց հպատակութիւն գաղթեցին և հաստատուեցան Ղզլարում և հիւսիսային Կովկասի միւս տեղերում։ Գաղթական հայերը քաջալերուելով կառավարութիւնից իրանց անձանձիր ջանքերով և բնածին յաջողութիւններով օգուտ տուին և օգուտ քաղեցին հողի բարեբերութիւնից, մտցրին այս կողմերում առևտրական շարժում, և այնպէս գեղեցիկ կերպով արդարացրին վերանորոգչի յոյսերը։ Ղզլարեցիների գործը այգեգործութիւնը, մոզդոկցիների երբեմն ծաղկած շերամապահութիւնը և հողագործութիւնը, շահաւէտ առևտուրը լեռնականների հետ, որ նպաստում էր և դիւրացնում էր յարաբերութիւնները, յայտնի էին։ Հայերը իրանց վարուողութեամբ և առանձին ձիրքով լեզուներ սովորելու մէջ յարմար էին դառնում թարգման և միջնորդ լինելու համար, այդ բոլորն անյիշելի չպէտք է մնան հիւսիսային Կովկասի տարեգրութիւնների մէջ։ Ըստ երևոյթին այս կողմերը գաղթող հայերը ոչ միայն Ղարաբաղից են եղել, այլև հայ երկրի զանազան տեղերից, այդ վկայում է և տեղական լեզուն, որ նման չէ Ղարաբաղի բարբառին. տեղական բարբառը թէև խառն է օտարամուտ բառերով, բայց և այնպէս մօտենում է իւր քերականական ձևերով և բառերի արտասանութեամբ գրական լեզուին։ Համե. պրոֆ. Պատկանեանը հայ բարբառների հետազօտութեան մէջ Աստրախանի և հիւսիսային Կովկասի հայերի բարբառը հիմք է ընդունում մեր գրական լեզուին. կարելի է եզրակացնել, որ զանազան տեղերից եկած հայերի պէսպէս բարբառներից փոխադարձ ազդեցութեան պատճառով կազմուել է մի ոճ, որ աւելի մօտ է գրականին։

Մոզդոկում հայ գաղթականների թիւը շատանում է Աղա-Մամադ Շահի Անդրկովկաս արշաւելուց յետոյ։ Հայերի հետ գաղթում են. այդ ժամանակները վրացիներ և հայ կաթոլիկներ։ Մոզդոկը տարածուած է Թերէքի երկայնութեամբ և բաժանուած է չորս թաղերի. միջի երկու թաղը հայերինն են, սրանց աջ կողմը վրացիների թաղն է և ձախ կողմը հայ կաթոլիկներինը, այս թաղերը մի ընդարձակ հրապարակով բաժանվում են օսերի, չերքէզների թաղից և ռուսների սլաբոդկից. ամեն մի թաղ ունի իւր եկեղեցին։ Քաղաքի փողոցներն ուղիղ գծերով են ձգուած, շուկան և եկեղեցիները զետեղուած են բաւականին ընդարձակ քառակուսի հրապարակներում։ Գաղթականների բազմանդամ գերդաստանները հաստատուելով Մոզդոկում իրանց բնակարանները շրջապատում են ընդարձակ բակերով, որտեղ թթենիներ և այլ պտղատու ծառեր անպակաս են լինում. չէ լինում մի բակ, որ չունենար թթենիներ, որովհետև շերամապահութիւնը քաղաքի արդիւնաբերութեան շահաւէտ ճիւղերից մէկն է դառնում։ Բայց շերամապահութիւնից հայերը յաջողութեամբ սկսում են պարապել հողագործութեամբ, վարուցան անելով քաղաքի՝ տէրութիւնից սեփականութիւն տուած հողերի վրայ, արհեստներով, որոնցից առաջին տեղը բռնում է եղել խաղախորդութիւնը, և վաճառականութեամբ. Մոսկուայից և Թիֆլիզից բերած ապրանքները շահաւէտ գներով վաճառում են եղել կազակներին, լեռնականներին և նողայներին։ Մոզդոկի առևտուրն աւելի աշխուժանում է, երբ բռնկվում են Կովկասեան պատերազմները։

Քաղաքն այդ ժամանակները թէև յաջողութեան մէջ է լինում, բայց և այնպէս ազատ չէ մնում պատերազմներին յարակից արհաւիրքներից. անհանգիստ լեռնականները յաճախ ասպատակներ էին անում, կողոպտում գիւղեր ու յարձակվում քաղաքի վրայ. քաղաքն այդ ժամանակ շրջապատուած է եղել փշածածկ պատնէշով, մթնանալուն պէս քաղաքից դուրս հանող դռները ամուր փակվում են եղել և քաղաքացիները հերթով գիշերապահութիւն են անելիս լինում. սպառնացող վտանգի դէպքում եկեղեցիների զանգակները հնչեցնելուն պէս, ամենքը, որոնք կարող էին զէնք գործածել պատրաստվում են եղել դուրս գալ քաղաքը պաշտպանելու համար։

(Վերջը միւս անգամ)։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին:

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին:

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղարկվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (omnibus) ուղարկվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան:

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղարկվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (omnibus) ուղարկվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև:

Բաթումից դուրս է գնում՝

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով՝ Նովորոսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստոպոլի և Եւպատորիայի վրայով:

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին), ապրանքա-մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները:

Չորեքշաբթի օրերը (լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Օդեսայից գալիս է Բաթում՝

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով:

Երեքշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը, շրջանառու ընթացքով:

Չորեքշաբթի և ուրբաթ —օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդէն փոխադրուած և տպագրութեան համար պատրաստ է

„ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ“ ԲՈԿԼԻ

Ի նկատի առնուած է Потовичъ-ի նոյն նշանաւոր գրքի փոխադրութիւնը: (2—1)

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

յայտնում է Ընկերութեան անդամներին, որ ամսոյս 23-ին, Շաբաթ օրը, երեկոյեան ժամը 7-ին Դումայի դահլիճում նշանակուած է Ընկերութեան անդամների ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաները լինելու են.—1) Ընկերութեան 1894 թուի ընդհանուր, այն է, կենդրոնի և ճիւղերի հաշուի քննութիւնը և հաստատութիւնը. 2) վերստուգող յանձնաժողովների զեկուցագրերը խորհրդի և ճիւղերի հաշիւների մասին և խորհրդի ու տեղական վարչութիւնների տուած բացատրութիւնները: 3) Ախալցխայի վարչութեան յաւելուածական նախահաշիւը 1895 թ. համար:

Ընկերութեան 1894 թ. տեղեկագիրը տպագրուած լինելով անդամները կարող են ստանալ ձրիաբար մի մի օրինակ խորհրդի գրասենեակից (Սերգիեւսկի փողոց, տուն Ալիխանեանի № 16): (2—2)

«Կենդրոնական գրավաճառանոցից» կարելի է ձեռք բերել

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-ի ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

Հէքեաթներ (5 պատմութիւն)
Ծովինար.
Ձէն թագաւոր.
Գալօ-Ափօ.
Աստուած չճանաչող.
Խուլ-Խաչիկ:

Մամուլի տակ է «Աստուած աղքատի կերպում» նոր աշխատութիւնը:

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը յայտնում է, թէ շաբաթ, դեկտեմբերի 23-ին, կէսօրուայ 12 ժամին իւր ներկայութեամբ աճուրդ կլինի՝ նոյեմբերի 22 ին չկայացած աճրդի փոխարէն: Աճուրդով տրվում է քաղաքային փողոցները նորոգելու համար 200 քառ. սաժ. քար և 250 քառ. սաժ. խիճ դարսել: Պայմանները կարելի է տեսնել ամեն օր՝ առաւօտեան 10 ժամից մինչև 2 ը քաղաքային վարչութեան շինարարական բաժանմունքում: (2—1)

Կենդրոնական Գրավաճառանոցում (Թիֆլիզ)

Առաջիկայ Ծննդեան տօների պարգևների համար պատրաստուած են մեծ քանակութեամբ հայերէն և ռուսերէն փառակազմ գրքեր. այդ գրքերի անուանական ցուցակը, բացի գրավաճառանոցի լիակատար ցուցակներից, որոնք ձրի են բաժանվում, հայերէնը տպվում է «Արձագանքում», իսկ ռուսերէնը՝ „Кавказъ“-ում: Նոյն տեղը բաժանորդագրութիւն է բացուած տեղական և օտարերկրեայ բոլոր պարբերական հրատարակութիւնների համար. մինչև յունվար բաժանորդ գրուողները օտարերկրեայ հրատարակութիւնների համար ճանապարհածախք չեն վճարում:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առեւտրական և գործարն. հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում, հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուատեսութեան:
բ) Առեւտրական թղթաբանութիւն:
գ) Առեւտրական նամակագրութիւն:
դ) Գեղագրութիւն և ամենայաստ ձեռքերի ուղղութիւն:

Պարապմունքներն սկսուելու են յունվարի 5-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իւրաքանչիւր 20րՍ ամսից յետոյ.

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 4½ ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Փրէյլինեան փողոց, տուն Սուլխանովի, № 13:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է Թիֆլիզի և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: Գինն է 3 ռուբլի 50 կոպ.:

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստայի ծախս վճարելու: (15—8)

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԱՅՍՈՒՐԵԱՆՑԻ

Տեղափոխուած է Բարոնսկայա փողոց, Կոլուբակեւ տունը՝ պահականոցի մօտ: (15—15)

„НЕДѢЛЯ“

Принимается подписка на 1896 г. (Двадцать-девятый годъ изданія).

„НЕДѢЛЯ“ состоитъ изъ двухъ изданій: еженедѣльной общественно-политической газеты „НЕДѢЛЯ“ и ежемѣсячнаго литературнаго журнала „КНИЖКИ НЕДѢЛИ“.

Соединеніе еженедѣльной общественно-политической газеты съ ежемѣсячнымъ литературно-критическимъ журналомъ даетъ возможность редакціи „НЕДѢЛИ“ охватывать въ своемъ изданіи всѣ интересы текущей жизни, подлежащіе вѣдѣнію періодической печати.

Цѣна газеты „НЕДѢЛЯ“ съ „КНИЖКАМИ НЕДѢЛИ“ девять рублей въ годъ съ пересылкой и доставкой.

Въ уплатѣ подписной суммы допускается разсрочка: при подпискѣ—5 руб. и къ 1-му іюня—4 р., а также и на другихъ условіяхъ по соглашенію подписчика съ конторой редакціи.

Подписка принимается: въ С.-Петербургѣ, въ конторѣ редакціи „НЕДѢЛИ“, Ивановская, 4.

(3—2) Редакторъ-издатель **В. П. Гайдебуровъ.**

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԵԱԿՈՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին:

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ռ. ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ:

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի:

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծովային գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի:

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն:

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. դրամագլուխ, որ պիտի նա առնի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի: Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում: Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող դրամագլուխն ապրուստի միջոցների համար նպաստ է:

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկուայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ Թիֆլիզում (Վելեամինովսկայա փ. տ № 2) և գործակալութիւնների մէջ Կայսրութեան բոլոր քաղաքներում:

Հասարակութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաշտարար դատարանի կողքին, տ. Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Իւանովի բնակարանում: (100—56)

ՔԱՂ. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԹԱՂ. ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՍՑԷՆԵՐԸ

I և II քաղաքամասեր: Վ. Մ. ԱՐԾՐՈՒՆԻ, Գոլովինսկ. պրոսպ. տ. Ադամեանցի № 28; Ն. Գ. ԿԱՍՈՒՄՈՎ, Միքայէլեան փողոց, տուն Պիրի № 118; Մ. Ա. ՄԻՐԱՔՈՎ, (ժամանակաւոր), Դէյդ. փող. սեպհ. տ. № 21

III, IV և V քաղաքամասեր: Ց. Ա ԳՈՆԻԵՎ, Սաղովայա փողոց, սեպհական տ. № 69

VI քաղաքամ. Գ. Բ. ՏԷՐ-ԱՍՏՈՒՐՈՎ, Վորոնցովսկայա փողոց, տ. Եղիզարովի № 55, բուժարանի տունը:

VII քաղաքամ. Գ. Գ. ԳՈՒԼՈՒԼԵԱՆՑ, Կախետինսկայա փողոց, տուն Տէրտէրովի № 26, բուժարանի տունը:

VIII և XI քաղ. Գ. Ա. ԹԱՐԽԱՆՈՎ, Ելիզավետինսկ. փողոց տ. № 70

X քաղաքամ. Գ. Ա ԳԷԴԱԼԻՆ, Միքայէլեան և Կոջուրէեվսկի փողոցների անկիւն, տուն Ուլանցեվայի № 2:

Ախտահանող բժիշկ Ե. Ա. ՐԱՁԱՄԱՍ, Սոլոլակի փող. տուն Սումբատովի. № 1: (3—2)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ
„ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ“
(Աշակերտական մասը)
Սահակ քահ. Սահակեանց:
(5—3)

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ է 23,000,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում:

Ծնողներին, խնամատարներին և առ հասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «ՌՕՍՍԻԱ» ընկերութիւնը առաջարկում է օժիտի (բաժինք) ապահովագրութիւն:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամսեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ռուբլի օժիտ, այնպէս որ, 18 տարեկան ժամանակին ստանան այդ գումարը (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «ՌՕՍՍԻԱ» ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 ռուբլի:

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձուին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները), եթէ միայն ապահովագրուած երեխան վախճանուի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 31,701 անձինք 83,708,760 ռուբլի դրամագլխով:

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացուի իբրև թոշակ (պէնսիա) կրթութիւնը շարունակելու համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնւում է՝

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեւսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:

52—41

ՖՈՆՕԳՐԱՖ
ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆոնոգրաֆիստ ՃԳՆԱՒՈՐԵԱՆԸ, որ ինչ ինչ գործերով ուղևորուել է Բերլին, Փարիզ, Լոնդոն և Ամստերդամ, պատեհութիւններից օգտուելով՝ բերած է իւր հետ ֆոնօգրաֆի միջոցով բարձրաստիճան պետական անձանց՝ ԳԼԱԴՍՏՈՆԻ, ՍՕԼՍԲԻՐԻԻ, ԿԱՐՆՕՑԻ և ՓՕՐԻ ճառախօսութիւնները, նմանապէս Եւրոպայի ամենանշանաւոր երգիչների ձայները, որոնք երգում են «Տրուբադուր», «Ֆաուստ», «Կավալերիա Ռուստիկանա», «Կարմէն» և այլ յայտնի օպերաներ:

ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ ՄԵԾ ԳՈՀՈՒԹԻՒՆ ԿԸՍՏԱՆԱՆ

Ֆոնօգրաֆը գտնվում է Ազնաւուր. քար. վերևի յարկում, Թատրոնին կից: (20—2)

„ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ“ (Թիֆլիզ)

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.—

	ռ.	կ.
Աղանեան. Պատի օրացոյց 1896 թ. առ. տ. գինն է	—	60
» Նոյն երկրորդ տեսակ գինն է.	—	30
Արծրունի բժ. Վ. Դպրոցական առողջապահութիւն. գինն է	—	50
Էջմիածնի օրացոյց 1896 թ. փառակազմ. գինն է	—	25
Զմշկեան Մ. օրացոյց 1896 թ. գինն է	—	15
Վենետիկի օրացոյց 1896 թ. գինն է	—	20
Բահաթրեան. Առ. առաջին ընթերցարան երկ. պատկեր. տ. գինն է	—	40
Բարխուդարեան Ց. (մանկավարժ) Մանկական խաղեր. գինն է.	—	50
Գարագաշեան. Քննական պատմութիւն Հայոց. 4 հ. գինն է	4	—
Ճաղարբէգեան Ց. Պատմութիւն Հայոց, պատկերազարդ. գինն է	—	40
Ծերեթէլի. Մարդ-առիւծ. գինն է	—	20
Լումայ. Գաբօյի ընտանիքը, վէպ Թիֆլիզի կեանքից. գինն է.	—	60
Պռօշեանց Պ. Ցուլիկներ. գինն է	1	—
Րաֆֆի. Զահրումար. վէպ Թիֆլիզի հայերի կեանքից. գինն է.	2	—
» Խամսայի մելիքութիւնները երկ. տպ. գինն է	1	75
Քալանթար. Սասուն, գինն է	—	20
Պատկանեան (Գ.-Ք.) Ընտիր երկասիրութիւններ, 2 հատոր. գինն է	4	—

Նոյն տեղը բաժանորդագրութիւն է բացուած բոլոր տեղական և օտար երկրների պարբերական հրատարակութիւնների: Կ. (3—2)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԹԻՖԼԻԶԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ
1-ն Դեկտեմբերի 1895 թ.

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիզում:		Բաժիններում:		Ընդամենը:	
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	369,313	72	223,257	77	592,571	49
2. Ընթացիկ հաշիւ պետական բանկայի բաժնում	387,121	20	920,100	—	1,307,221	20
3. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագր.	3,011,683	2.	1,150,520	78	4,162,004	05
4. Զեղջ. մուրհակաց մի ստորագր. ապահոված ծոկոս թղթ.	369,074	11	—	—	369,074	11
5. Զեղջումն տոկոսաբեր թղ., կտրօնների և այլն.	39,452	34	6,704	—	46,156	34
6. Փոխատուութիւն գրաւականով						
ա) Պետութ.- ապահ. տոկոսաբեր թղթերի	1,375,354	49	540,666	05	1,916,020	54
բ) „ „չ „ „ „	265,784	—	22,050	—	287,834	—
գ) Ապրանքների	39,542	34	756,138	15	760,116	15
դ) Ոսկու և արծաթի	—	-	10,739	31	10,739	31
7. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	1,094,866	81	83,590	64	1,178,457	45
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր	629,248	30	156	74	296,405	04
9. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամագլխի	256,842	85	—	—	256,842	85
10 Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	15,393,715	36	—	—	15,393,715	36
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	21,195,715	67	—	—	21,195,715	67
11, Բաժինների հաշիւը Կենդրոնական վարչութեան հետ	1,222,445	55	—	—	1,222,445	55
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	—	—	1,734,955	06	1,734,955	06
12, Գնումն և վաճառումն արժեթղթերի ըստ յանձնարարութեան	115,600	—	—	—	115,600	—
13, Պայմանաժամն անցուցած փոխատուութիւն	71,566	—	18,655	—	90,221	—
14. Բողոքուած մուրհակներ	61,592	56	150	—	61,742	53
15. Ընթացիկ ծախսեր	54,050	57	43,711	75	97,762	32
16. Կահ-կարասիք և սկզբնական ծախսեր	3,129	56	7,513	53	10,643	09
17. Յետ ստացուելիք ծախսեր	8,573	31	6,647	59	15,220	90
18. Անշարժ կալուածք	—	—	50,082	15	50,082	15
Ր. Ա.	45,596,107	67	5,575438	52	51,171,546	19

ՊԱՐՏՔ	Թիֆլիզում:		Բաժիններում:		Ընդամենը:	
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000	—	—	—	1,000,000	—
2. Պահեստի դրամագլուխ	256,903	05	—	—	256,903	05
3. Դրամագլուխ անշարժ կայքի շինչուցման	—	—	1,229	88	1,229	88
4. Դրամական աւանդներ՝						
ա) Պայմանաժամով	4,538,407	—	1,511,134	—	6,049,541	—
բ) Ցպահանջ	278,625	—	152,870	--	431,495	—
գ) Ընթացիկ հաշուով, հասարակ	1,133,102	63	2,170,395	92	3,303,498	55
դ) „ „ պայմանաւոր	—	—	218,268	69	218,268	69
5. Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	15,291,881	64	—	—	15,291,881	64
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	21,046,564	23	—	—	21,046,564	23
6. Բաժինների հաշիւը Կենդրոնական վարչութեան հետ	—	—	1,283,409	87	1,283,409	87
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	1,641,246	62	—	—	1,641,246	62
7. Բանկայի բաժնատոմսերի անվճար կտրօնների բաշխը	4,162	45	—	—	4,162	45
8. Չվճարուած տոկոսներ աւանդների ընթացիկ հաշիւների և այլ գործողութիւնների	124,871	93	69,105	89	193,877	82
9. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	224,815	07	109,807	29	334,622	36
10. Փոխանցիկ գումարներ	55,528	05	59,216	98	114,745	03
Ր. Ա.	45,596,107	67	5,575,438	52	51,171,546	19